ՍԱՂՄՈՍ 30

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Մահից փրկվելու գոհության աղոթք <u>MT նախաբան</u> Դավթի տան նավակատիքի երգը	Պատասխանված աղոթքի օրհնությունը	Բժշկության համար գոհություն	Գոհության աղոթք	Գոհություն մահացու վտանգներից հետո
30:1-5	30:1-3	30:1-3	30:1-3	30:1-3
	30:4-7	30:4-7	30:4-5	30:4-5
30:6-9			30:6-7	30:6-7
	30:8-10	30:8-10	30:8-10	30:8-9
30:10-12				30:10-12
	30:11-12	30:11-12	30:11-12	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

MT-ում տրված ներածականը բնագրային չէ (այսինքն՝ DSS-ի սաղմոսներում չկա): Ըստ երևույթին այն ավելացվել է հետագայում: Ես չեմ ընդունում այս ներածականները որպես ներշնչանքով գրված (տես՝ Գլիսոն Արչերի, *Սուրբգրային դժվարությունների հանրագիտարան*, էջ՝ 243), հետևաբար, այս ներածականների շուրջ ես չեմ մեկնաբանում:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 30:1-5

[1]Բարձրացնում եմ Քեզ, ո՛վ ՏԵՐ, քանզի Դու ինձ ազատեցիր
Ու չթողեցիր, որ թշնամիներս իմ վրա ուրախանան:
[2]Ո՛վ իմ ՏԵՐ Աստված, Քեզ աղաղակեցի
Ու Դու ինձ բժշկեցիր:
[3]Ո՛վ ՏԵՐ, իմ անձը հանեցիր գերեզմանից,
Դու ինձ կենդանի պահեցիր, որպեսզի գուբը չիջնեմ:
[4]Երգեցե՛ք ՏԻՐՈՋԸ, ո՛վ Նրա սրբեր,
Եվ գոհացե՛ք Նրա սրբության հիշատակով:
[5]Քանի որ մեկ ակնթարթ է Նրա բարկությունը,
Իսկ Նրա բարեհաճության մեջ կյանք կա.
Լացը կարող է շարունակվել գիշերը,
Բայց առավոտյան ուրախությունն է գալիս:

30:1-5 Սաղմոսերգուն բարձրացնում և փառաբանում է ՅԱՀՎԵԻՆ, որ ազատեց իրեն մահից:

30:1 «Բարձրացնում եմ քեզ» Այս ԲԱՑԸ (BDB 926, KB 1202, *Polel* ԱՆԿԱՏԱՐ Է՝ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով) ունի երկու հիմնական նշանակություն:

1. մեծարել, գովաբանել (այստեղ՝ ՅԱՀՎԵԻՆ), տես՝ Ելից 15:2, Սաղմ.34:3, 99:5,9, 107:32, 118:28, 145:1, Եսայի 25:1
2. բարձրացնել (նկատի ունի՝ փառաբանություն ՅԱՀՎԵԻՆ), տես՝ 2 Թագ.22:47, Սաղմ.18:46, 21:13, 46:10, 57:5,11

ՅԱՀՎԵԻ գործելուն ի պատասխան բարձրացվում է այս փառաբանությունը:

1. Նա բարձրացրեց (BDB 194, KB 222, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) սաղմոսերգուին՝ Սաղմ.30:1 (այս տերմինը գործածվում էր ջրհորից ջուր դուրս հանելու համար և կարող է վերաբերել փոսից՝ գուբից գերբնական ձևով ազատվելու համար, տես՝ Սաղմ.30:4):
2. Նա թույլ չտվեց, որ սաղմոսերգուի թշնամիները ուրախանան (BDB 33, KB 38, *Qal* ԴԵՐԲԱՑ), տես՝ Սաղմ.25:2, 41:11:
3. Նա բժշկեց նրան (BDB 750, KB 1272, *Qal* ԱՆԿԱՏԱՐ *վավ*-ով), Սաղմ.30:2
4. Նա նրա անձը *Շեոլից* դուրս հանեց (BDB 748, KB 828, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ), Սաղմ.30:3:
5. Նա նրան կենդանի պահեց (BDB 310, KB 309, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ), Սաղմ.30:3:

30:2 «Ո՛վ իմ ՏԵՐ Աստված» Սա Իսրայելի Աստծո ամենատարածված անուններից երկուսն է (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ.ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ</u>):

1. ՅԱՀՎԵ – Աստված որպես Փրկիչ, ուխտ կապող Աստված, տես՝ Ծննդ.2:3
2. *Էլոհիմ* – Աստված որպես արարիչ և այս ամբողջ մոլորակին կյանք տվող, տես՝ Ծննդ.1:1

Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է այս Սաղմոսը սկսում այս անունով (Սաղմ.30:2) և ավարտվում այս նույն անունով (Սաղմ.30:12): Սա բնորոշ է եբրայական գրականության ոճին (այսինքն՝ *inclusio- ներառական*):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ
SPECIAL TOPIC: HEALING

Ինձ համար ապշեցուցիչ է, որ ՆԿ-ում ոչ բոլորը, ովքեր բժշկվեցին, անմիջապես «փրկվեցին» (այսինքն՝ վստահեցին Քրիստոսին և ունեցան հավիտենական կյանք): Ֆիզիկական բժշկությունը աղքատիկ փոխարինում է հոգևոր փրկությանը: Հրաշքները իրոք օգտակար են միայն այն դեպքում, եթե դրանք մեզ մոտեցնում են Աստծուն: Բոլոր մարդիկ ապրում են մեղավոր

աշխարհում: Վատ բաներ են պատահում: Աստված հաճախ ընտրում է չմիջամտել, սակայն սա ոչինչ չի ասում Իր սիրո և հոգածության մասին: Զգույշ եղե՛ք պահանջելուց, որ Աստված հրաշքներ գործի յուրաքանչյուր կարիքի համար այս ներկայիս չար դարաշրջանում: Նա գերիշխան է, իսկ մենք չգիտենք ցանկացած տրված իրավիճակի ամբողջ նպատակը:

Այս հարցում կուզեի ավելացնել իմ մեկնություններից մի գրառում 2 Տիմ. 4:20-ից՝ Պողոսի և ֆիզիկական բժշկության վերաբերյալ (տես՝ www.freebiblecommentary.org)

> «Այնքան շատ հարցեր կան, որ կուզեինք հարցնել ՆԿ-ի գրողներին: Թեմաներից մեկը, որ բոլոր հավատացյալները մտածում են ֆիզիկական բժշկությունն է: Գործքում (տես՝ 19:12, 28:7-9) Պողոսը կարողանում է բժշկել, սակայն 2 Տիմ. 4:20, 2 Կորնթ. 12:7-10 ը Փիլ. 2:25-30-ում կարծես թե նա չի կարողանում: Ինչո՞ւ են ոմանք բժշկվում և ոչ թե բոլորը, և արդյո՞ք կա ժամանակի պատուհան, որը կապում է բժշկության հետ, որը փակվել է (այսինքն՝ Առաքելական շրջանը)»:

Ես հաստատ հավատում եմ գերբնական, գթառատ Հորը, ով բժշկել է և հիմա էլ բժշկում է ֆիզիկական հիվանդություններ, ինչպես նաև հոգևոր, սակայն ինչո՞ւ է այս բժշկության ասպեկտը թվացյալ ներկա և ապա շոշափելիորեն բացակա (այսինքն՝ ժամանակակից արևմտյան եկեղեցիները): Ես չեմ կարծում, որ դա կապ ունի մարդու հավատքի հետ, քանի որ Պողոսը հաստատ հավատք ուներ (այսինքն՝ «մարմնի խայթոց», տես՝ 2 Կորնթացիների 12): Ես զգում եմ, որ բժշկությունը և հրաշքներին հավատալը հաստատում էր ավետարանի ճշմարտացիությունը և վավերականությունը, որը դեռևս նույն կերպ է աշխարհի այնպիսի վայրերում, որտեղ առաջին անգամ է քարոզվում: Սակայն, ես զգում եմ, որ Աստված ուզում է, որ մենք քայլենք հավատքով և ոչ թե տեսածով: Ֆիզիկական հիվանդությունը հաճախ նաև թույլատրվում է հավատացյալի կյանքում՝

1. որպես ժամանակավոր մեղքի պատիժ
2. մեղավոր աշխարհում կյանքի հետևանքներ
3. որպեսզի հավատացյալներին օգնի հոգևորապես աճել

Իմ խնդիրն այն է, որ ես երբեք չեմ իմանա, թե որ մեկն է տվյալ պահին գործում: Իմ աղոթքը, որ յուրաքանչյուր դեպքում էլ Աստծո կամքը լինի, հավատքի պակասության հարց չէ, այլ անկեղծ փորձ թույլ տալու գթառատ ու ողորմած Աստծուն Իր կամքը գործադրելու յուրաքանչյուր մարդու կյանքում:

Ահա իմ եզրահանգումները՝

1. Բժշկությունը Հիսուսի և Առաքյալների ծառայության մի նշանակալի մասն է կազմել:
2. Դրա նպատակն է եղել հիմնականում հաստատելու Աստծո և Նրա Թագավորության մասին արմատապես նոր պատգամը:
3. Այն ցույց է տալիս Աստծո սիրտը վիրավոր մարդու հանդեպ
4. Աստված չի փոխվել (Մաղ. 3:6) և Նա դեռ գործում է սիրով, բժշկությամբ (բոլոր հոգևոր պարգևները շարունակվում են, տես՝ 1 Կորնթ. 12:9, 28, 30):
5. Կան օրինակներ, երբ մեծ հավատք ունեցող մարդկանց կյանքում բժշկություն տեղի չի ունեցել (մի գրքույկ, որն ինձ շատ է օգնել գտնելու այս հարցի պատասխանը Գորդեն Ֆիի, *Առողջության հիվանդությունը, Հարստության Ավետարանը*):
   ա. Պողոսը՝ 2 Կորնթ. 12:7-10
   բ. Տրոմիփոսը՝ 2 Տիմ. 4:20
6. Մեղքն ու հիվանդությունը ըստ մեղքի մասին ռաբբիական մտածելակերպի իրար հետ փոխկապակցված են (տես՝ Հովհ. 9:2, Հակոբոս 5:13-18):
7. Բժշկությունը Նոր Կտակարանի երաշխիք չէ: Սա Եսայի 53:4-5-ում և Սաղմ. 103:3-ում նկարագրված քավության մի մասը չի կազմում, որտեղ բժշկությունը ներման նկարագրություն է (տես՝ Ես. 1:5-6, որտեղ հիվանդությունը մեղքի նկարագրություն է):
8. Առեղծվածային է, թե ինչու են ոմանք բուժվում, իսկ ոմանք՝ ոչ:

9. Հնարավոր է, որ չնայած բժշկությունը առկա է եղել բոլոր դարերում, Հիսուսի կյանքի ընթացքում այն նշանակալիորեն ավելի է շատացել: Այս ավելացումը կրկին տեղի է ունենալու Նրա գալուստից առաջ:

Ժամանակակից մի հեղինակ, որը ինձ օգնեց հասկանալու, որ իմ սեփական հարանվանական ավանդույթը թերագնահատել է Հոգու գործը, հատկապես հրաշքները, դա Գորդոն Ֆին է: Նա մի քանի գիրք ունի, սակայն դրանցից երկուսը, որն այս թեմային է անդրադառնում և հավանեցի, հետևյալն են՝

1. *Պողոսը, Հոգին և Աստծո ժողովուրդը*
2. *Աստծո զորացնող ներկայությունը. Սուրբ Հոգին և Պողոսի թղթերը:*

Ինչպես և սուրբգրային հարցերի մեծամասնության դեպքում է, այստեղ էլ առկա է երկու ծայրահեղություն: Մենք բոլորս պետք է քայլենք մեր ունեցած սիրո լույսի ներքո, սակայն լինենք բաց Աստվածաշնչից և Սուրբ Հոգուց ընդունելու շատ ավելի լույս:

❖ **«Դու ինձ բժշկեցիր»** Տես վերը նշված Հատուկ Թեման:

30:3 «Շեոլ. . . գուբ» Այս երկու տերմինները (հոմանիշ զուգահեռներ են) նկատի ունեն գերեզմանը կամ մեռելների պահման վայրը: Տե՛ս <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Որտե՞ղ են մեռելները:</u>

Ուշադրություն դարձրե՛ք, որ հակասական զուգահեռությունը տարածված է այս Սաղմոսում: Այն ցույց է տալիս իրական կյանքի կերպերով Սաղմոս 1-ի «երկու ճանապարհները»:

«Գուբ» տերմինի շուրջ համառոտ քննարկման համար տես IVP, *Սուրբգրային նկարագրությունների բառարան*, էջ՝ 646-647:

30:4

NASB	**«աստվածավախները»**
NKJV	**«սուրբերը»**
RSV	**«հավատարիմները»**
TEV	**«հավատարիմ ժողովուրդը»**

Այս ԱԾԱԿԱՆԸ (BDB 339) կազմված է *hesed* (BDB 338) ԳՈՅԱԿԱՆԻՑ, որը ցույց է տալիս ուխտի հավատարմությունը: Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (*HESED*)</u>:

1. Աստծո կողմից. Նա հավատարիմ թ Իր ուխտի խոստումներին:
2. Հավատարիմ հետևորդի կողմից. նա պետք է հնազանդ և հաստատ լինի իր ուխտի պարտավորությունների մեջ:

Սաղմոսներում այն դառնում է ընդունված անուն ուխտի հավատարիմ հետևորդների համար (այսինքն՝ Սաղմ.4:3 և շատ ուրիշ համարներում): Մի քանի թարգմանություններ (TEV, NJB) 30:4-5 համարները դիտարկում են որպես առանձին պարբերություն, որն աղաչում է հավատարիմ հետևորդներին միանալու ՅԱՀՎԵԻՆ փառաբանելուն (տես՝ պարբերությունների բաժանումը այս Սաղմոսի առաջին էջում):

Այս համատեքստում նրանք կանչվում են՝

1. երգելու փառաբանություն – BDB 274, KB 273, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. գոհություն տալու – BDB 392, KB 389, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

NASB, NRSV,	
JPSOA	**«անուն»**
NKJV	**«հիշատակ»**
TEV	**«հիշել»**
NJB	**«անմոռանալի»**

MT տալիս է «հիշատակ» կամ «հիշողություն» ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 271, տես՝ Ովս.12:5): Այստեղ նկատի ունի ՅԱՀՎԵԻ գթառատ բնավորությունը և հզոր գործերը Իր ժողովրդի համար (տես՝ Սաղմ.6:5, 30:5, 97:12, 102:12, 111:4, 145:7): Եբրայերեն «անուն» հասկացությունն է այստեղ, այլ ոչ թե բառը: Երկուսն էլ առկա են զուգահեռաբար Սաղմոս 135:13 և Եսայի 26:8-ում: Նաև ուշադրություն դարձրե՛ք «հիշատակ-անուն» խոսքին Ելից 3:15-ում:

30:5 Այս համարը գրավել է ընկած մարդկության շնորհքի հրաշքը (հակասական զուգահեռ): Սա ընկած աշխարհ է, սակայն ՅԱՀՎԵՆ թույլ չէր տա, որ Եդեմի խաթարված փոխհարաբերությունը մշտապես մնար: Մեղքը և ապստամբությունը ունեն հետևանքներ, սակայն Նրա շնորհքի միջոցով՝ հավատարիմ հետևորդի հավատքի միջնորդությամբ (տես՝ Եփես.2:8-9), կա ներում և վերականգնում (տես՝ Սաղմ.103:8-14, Եսայի 54:7-8): Միակ մշտական հետևանքը անհավատությունն է: Դա աններելի մեղքն է (տես՝ Հատուկ Թեմա. Աններելի մեղքը):

Սաղմ.30:5-ի առաջին երկու տողերը ԲԱՑԵՐ չունեն: ԺԱՄԱՆԱԿԻ կազմությունը շեշտադրում է աստվածաբանական նպատակը՝

«Քանի որ մի ակնթարթ է Նրա բարկությունը
Իսկ Նրա բարեհաճության մեջ կյանք կա»:

AB (էջ՝ 182) առաջարկում է «կյանք» (BDB 213) բառը նշանակում է «հավիտենական կյանք», հիմնված Սաղմ.21:4-ի վրա: Այնուհանդերձ Սաղմ.91:16 այս բառի ՀԿ-յան սովորական կիրառությունն է ներկայացնում, որը վերաբերում է այս կյանքին:

Այս համատեքստում «բարկություն» բառի շուրջ պարզապես մի հավելյալ միտք կա: ՀԿ-ը դիտարկում է մեղքի և հիվանդության միջև կապ (տես՝ Հակ.5:13-18): Հիսուսը կարծես թե վերանայում է այս տեսակետը Հովհ.9:1-12-ում: Եթե Աստված դատեր մեզ մեր մեղքի պատճառով, մենք բոլորս էլ կհիվանդանայինք և կմեռնեինք: Հրաշալի ճշմարտությունը այն է, որ մենք արժանի են «բարկության», սակայն մենք ստանում ենք ողորմություն, շնորհք և սեր: Ինչևէ, մենք բոլորս չէ, որ բժշկվում ենք (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴՅՈ՞Ր ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ԴԱՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՍՏԾՈ ԾՐԱԳԻՐՆ Է): Սակայն Նա մեզ հետ է մեր բոլոր նեղությունների մեջ (տես՝ Հռոմ.8:18-25, 2 Կորնթ.4:17):

❖ **«Նրա բարկությունը»** Այս արմատը (BDB 60) կապված է «քիթ» (այսինքն՝ կարմրած դեմք) կամ «խռռոց» (չարտասանված, սակայն մարդկային զգացմունքի ձայնային նշան) բառերի հետ: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ.ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔ
SPECIAL TOPIC: SIN UNTO DEATH

Ա. Հերմենևտիկական ենթադրություններ՝
1. Ճիշտ սահմանումը պետք է կապված լինի 1 Հովհաննեսի գրքի պատմական միջավայրի հետ՝
   ա. Գնոստիկ սուտ վարդապետների ներկայությունը (տես՝ Հատուկ Թեմա.Գնոստիցիզմ) եկեղեցիներում (տես՝ 1 Հովհ.2:19,26, 3:7, 2 Հովհաննես 7, տես՝ Հատուկ Թեմա.Գնոստիցիզմ)
      1) «Ցերինթիական»: Գնոստիկները սովորեցնում էին, որ Հիսուս մարդը ստացել է Քրիստոսի հոգին իր մկրտության ժամանակ և որ Քրիստոսի հոգին նրան թողել է խաչի վրա իր մահից առաջ (տես՝ 1 Հովհ.5:6-8):
      2) «Դոկետիկ» գնոստիկները սովորեցնում էին, որ Հիսուսը աստվածային հոգի էր, ոչ թե իրական մարդկային էակ (տես՝ 1 Հովհ.1:1-3)
      3) Երկրորդ դարի գրերում հայտնված գնոստիցիզմը արտացոլում էր երկու տարբեր տեսակետներ մարդու մարմնի վերաբերյալ՝
         (ա) քանի որ փրկությունը մտքի համար հայտնված՝ բացահայտված ճշմարտություն էր, մարդու մարմինը հարմար չէր հոգևոր տիրակալությանը: Հետևաբար, ինչ որ ցանկանում էր, կարող էր անել՝ ունենալ: Սրանք հաճախ լիբերալ Գնոստիկներին էին վերաբերում:

(բ) մյուս խումբը եզրակացնում էր, քանի որ մարմինը ի ծնե չար է (այսինքն՝ ըստ հունական մտածելակերպի), ցանկացած մարմնավոր ցանկությունից պետք է խուսափել: Այս մարդիկ կոչվում էին «Ասկետիկ» գնոստիկներ:

բ. այս սուտ վարդապետները հեռացան եկեղեցուց (տես՝ 1 Հովհ. 2:19), սակայն նրանց ազդեցությունը չհեռացավ:

2. ճիշտ սահմանումը պետք է կապ ունենա ամբողջ գրքի գրական համատեքստի հետ:

ա. 1 Հովհաննես գիրքը գրվել է պայքարելու սուտ վարդապետների դեմ և ճշմարիտ հավատացյալների հաստատելու համար

բ. այս երկու պատճառները կարող ենք տեսնել ճշմարիտ հավատացյալներին ստուգելիս՝

1) վարդապետական

(ա) Հիսուսն իրոք մարդ էր (տես՝ 1 Հովհ. 1:3, 4:14)

(բ) Հիսուսն իրոք Աստված էր (տես՝ 1 Հովհ. 1:2, 5:20)

(գ) մարդիկ մեղավոր են և պարտավոր սուրբ Աստծո առաջ (տես՝ 1 Հովհ. 1:6,10)

(դ) մարդիկ նաև ներված են և Աստծո առջև արդարացած՝

i. Հիսուսի մահվամբ (տես՝ 1 Հովհ. 1:7,2:1-2, 3:16, 4:9-10,14, 5:6-8)

ii. Հիսուսին հավատալու միջոցով (տես՝ 1 Հովհ. 1:9, 3:23, 4:15, 5:1,4-5, 10-12,13)

2) գործնական (դրական)

(ա) հնազանդության ապրելակերպ (տես՝ 1 Հովհ. 2:3-5, 3:22,24, 5:2-3)

(բ) սիրո ապրելակերպ (1 Հովհ. 2:10, 3:11,14,18,23, 4:7,11-12, 16-18,21)

(գ) Քրիստոսանման կյանք (չի մեղանչում, տես՝ 1 Հովհ. 1:7, 2:6,29, 3:6-9, 5:18)

(դ) չարի վրա հաղթանակած կյանք (տես՝ 1 Հովհ. 2:13, 14, 4:4, 5:4)

(ե) Նրա խոսքը բնակվում է նրանց մեջ (տես՝ 1 Հովհ. 1:10, 2:14)

(զ) նրանք ունեն Հոգին (տես՝ 1 Հովհ. 3:24, 4:4-6, 13)

(է) աղոթքը պատասխանվում է (տես՝ 1 Հովհ. 5:14-15)

3) գործնական (բացասական)

(ա) մեղքի ապրելակերպ (տես՝ 1 Հովհ. 3:8-10)

(բ) ատելության ապրելակերպ (տես՝ 1 Հովհ. 2:9,11, 3:15, 4:20)

(գ) անհնազանդության ապրելակերպ (տես՝ 1 Հովհ. 2:4, 3:4)

(դ) աշխարհասիրություն (տես՝ 1 Հովհ. 2:15-16)

(ե) Քրիստոսին ուրանում են (ուրանում են Հորը և Որդուն, տես՝ 1 Հովհ. 2:22-23, 4:2-3, 5:10-12):

3. ճիշտ սահմանումը պետք է կապված լինի համապատասխան տեքստում հատուկ հասկացությունների հետ (տես՝ 1 Հովհ. 5:16-17)

ա. Արդո՞ք 1 Հովհ. 5:16-ի «եղբայր» տերմինը կապ ունի թե՛ այն մարդկանց հետ, որոնք մեղանչում են, բայց ոչ մահացու մեղքեր և թե՛ մահացու մեղք գործողների հետ:

բ. Արդյո՞ք այդ վիրավորվածները ժամանակին եղել են եկեղեցու անդամներ (տես՝ 1 Հովհ. 2:19):

գ. Ո՞րն է այս բառերի տեքստային նշանակությունը՝

1) «մեղք» բառն առնաց ՀՈԴԻ

2) «տեսնում է» ԲԱՅԸ որպես ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՈՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՈՎ:

դ. Ինչպե՞ս կարող է մի Քրիստոնյայի աղոթքները (տես՝ Հակ. 5:15-16) վերականգնել մեկ ուրիշի հավիտենական կյանքը, *zōē*, առանց մեղավորի անձնական ապաշխարության:

ե. Ի՞նչ կապ կա 1 Հովհ. 5:17-ի մեղքի տեսակների հետ (մահացու է, թե ոչ մահացու):

Բ. Աստվածաբանական խնդիրները

1. Պետք է արդյոք մեկնաբանը փորձի կապել սա այն տեքստերի հետ, որոնք ունեն իրենց մեջ՝

   ա. «աններելի» մեղքը՝ Ավետարաններում (տես՝ Հատուկ Թեմա. Աններելի մեղք):

   բ. Եբրայեցիների 6 և 10 «մեկ անգամ գործված» մեղքը:

   1 Հովհաննեսի համատեքստը կարծես թե զուգահեռվում է Հիսուսի օրոք փարիսեցիների աններելի մեղքի հետ (տես՝ Մատթ.12:22-37, Մարկ.3:22-29) ինչպես նաև Եբրայեցիների 6 և 10-ում անհավատ հրեաների մեղքի հետ: Բոլոր այս երեք խմբերը (փարիսեցիները, անհավատ հրեաները և գնոստիկ սուտ վարդապետները) հստակ լսել էին ավետարանը, սակայն նրանք մերժեցին վստահել Հիսուս Քրիստոսին:

2. Արդյո՞ք ժամանակակից հարանվանական հարցերը պետք է լինեն այս տեքստը դիտարկելու համար աստվածաբանական ցանց:

   Ավետարանականությունը խիստ շեշտադրել է Քրիստոսնեական կյանքի մեկնարկը և արհամարհել ճշմարիտ հավատքի շարունակելի կյանքը: Մերօրյա աստվածաբանական հարցերը կապշեցնեին առաջին դարի Քրիստոնյաներին: Մենք ցանկանում ենք «որոշակիություն» հիմնված հատընտիր սուրբգրային «ապացույց հանդիսացող տեքստերի» և մեր սեփական տրամաբանական հետևությունների կամ հարանվանական հակումների վրա:

   Մեր աստվածաբանական հարցերը, ցանցերը և տարբերությունները արտացոլում են մեր սեփական վախերը: Մենք ավելի շատ ենք ցանկանում տեղեկություն կամ հստակեցում, քան այն, որ Աստվածաշունչն է ապահովում, ուստի մեր համակարգված աստվածաբանությունները գրավում են ավելի փոքր տեղ Սուրբ Գրքի մեջ և հյուսում մեծ ցանցեր տրամաբանական, արևմտյան, հատուկ վարդապետություններից:

   Մատթևոս 7 և Մարկոս 7-ում Հիսուսի խոսքերը տեղին էին վաղ եկեղեցու համար: Հիսուսը փնտրում է աշակերտներ և ոչ թե որոշումներ, երկարատև հավատքի կյանք, ոչ թե կարճատև զգայական հավատք (տես՝ Մատթ.13:10-23, 28:18-20, Հովհ.8:31-59): Քրիստոնեությունը մեկուսի անցյալի գործ չէ, այլ շարունակական ապաշխարություն, հավատք, հնազանդություն և հարատևություն: Քրիստոնեությունը երկինք տանող տոմս չէ, որ գնվել է անցյալում, որ էլ հրդեհների դեմ ապահովագրության քաղաքականություն, որպեսզի պաշտպանի մարդուն եսասեր, անաստված ապրելակերպից: Տես <u>Հատուկ Թեմա. Ուխտադրժություն</u>:

3. Արդյո՞ք մահացու մեղքը վերաբերում է ֆիզիկական մահվանը, թե՞ հավիտենական մահվանը: Հովհաննեսի կողմից *zōē* բառի կիրառությունն այս համատեքստում ենթադրում է հավիտենական կյանքին վերաբերող կոնտրաստը: Հնարավո՞ր է, որ Աստված տուն տանի (ֆիզիկական մահ) մեղավոր երեխաներին: Այս համատեքստը ենթադրում է, որ (1) հավատակիցների աղոթքները և (2) օրինազանցի անձնական ապաշխարությունը միաձուլվում են վերականգնելու հավատացյալներին, սակայն եթե նրանք շարունակում են նույն կյանքով ապրել, որը բերում է նախատինք հավատացյալ համայնքի վրա, ապա արդյունքում կարող է լինել «անժամանակ» կամ վաղաժամ ֆիզիկական հեռացում այս կյանքից (տես՝ *Երբ քննադատները հարցնում են* Նորման Գիսլերի և Թոմաս Հոուի կողմից, էջ՝ 541):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 30:6-9

[6]Ես իմ հաջողության մեջ ասացի. «Երբեք չեմ սասանվելու»:
[7]ՏԵՐ, Քո բարեհաճությամբ իմ լեռը հաստատուն դարձրիր,
Իսկ երբ երեսդ ծածկեցիր, ես խռովվեցի:
[8]Ո՛վ ՏԵՐ, Քեզ եմ աղաղակում,
Ու ՏԻՐՈՋՆ եմ աղաչանք անում:
[9]Իմ արյունից ի՞նչ օգուտ է լինելու, երբ ես գուբն իջնեմ:
Մի՞թե հողափոշին քեզ կփառաբանի,

Կամ կհռչակի Քո ճշմարտությունը:

30:6-9 Այս պարբերությունը կարծես թե արտացոլում է Ղևտացիների 26 և 2 Օրինաց 28 գլուխների ուխտի խոստումների իրականացումը: ՅԱՀՎԵՆ ուզում էր հաջողություն տալ Իր ժողովրդին՝ աշխարհին Իր բնավորությունը ցույց տալու համար: Սաղմոսերգուն, որպես հավատարիմ հետևորդ, հայտարարում է, թե ՅԱՀՎԵՆ ինչ է արել իր համար:

1. հաջողություն է տվել իրեն
2. կայունություն է տվել (այսինքն՝ «Երբեք չեմ սասանվելու»)
3. զորացրել է նրան (այսինքն՝ լեռան պատկերը, LXX տալիս է «իմ վեհափառություն»)
4. պատասխանել է իր աղոթքները
5. պաշտպանել է իրեն մահից, որպեսզի կարողանա փառաբանել ՅԱՀՎԵԻ հավատարմությունը (BDB 54)

AB (էջ՝ 182) այս պարբերությունը դիտարկում է որպես գերվստահության մեղքի դեմ զգուշացում: UBS *Հեռնարկը* (էջ՝ 282) այն դիտարկում է որպես իր անցյալի ոչ պատշաճ փորձառություն: Այդուհանդերձ ես նախընտրում եմ Ղևտացիների 26 և 2 Օրինաց 28-ի վստահությունը: *Հեռնարկը* հայտարարում է, որ այս Սաղմոսը, ինչպես և Սաղմոս 29, քյաստիկ ձևաչափով է: Եթե այդպես է, ապա քիազմի մեջտեղի խոսքը պետք է լինի գլխավոր ճշմարտությունը: Սակայն նկատե՛ք, որ այդ համարը կլինի Սաղմ.30:6-ը, որը թե *UBS հեռնարկը* և թե՛ AB-ն նշում են, որ չի համապատասխանում: Դու չես կարող երկու դեպքում էլ չի համընկնում:

30:7բ Հայտնի չէ, թե ինչպես է Սաղմ.30:7բ համընկնում Սաղմ.30:7ա,գ-ի հետ: Երկու ԲԱՅԵՐԸ (ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԸ) նկարագրում են կայուն վիճակ.

1. Քո երեսը ծածկեցիր – BDB 711, KB 771, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ, «երես» բառը վերաբերում է անձնական ներկայությանը, նա զգում էր կարծես ՅԱՀՎԵՆ թողել էր իրեն, հասանելի չէր, չէր լսում իր աղոթքները:
2. Ես (BDB 224, KB 243, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) խռովվեցի – BDB 96, KB 111, *Niphal* ԴԵՐԲԱՅ: Այս տերմինը նշանակում է «անհանգստանալ», «սարսափել» կամ «ահաբեկվել», տես՝ Հոբ 4:5, 23:15, Սաղմ.6:2-3, 83:17, 90:7, 104:29, Ես.13:8, 21:3, Երեմ.51:32, Եզեկ.26:18:

JPSOA դիտարկում է Սաղմ.30:7բ Սաղմ.30:8-ի հետ հակադրության մեջ, ՅԱՀՎԵՆ սաղմոսերգուին դարձրել է «ամուր և հաստատուն ժայռ», սակայն եթե/երբ Նա ծածկում էր Իր երեսը, «սարսափ»-ի էր մատնվում: Ուստի նա կանչում էր ՅԱՀՎԵԻՆ աղոթքով (Սաղմ.30:8): Միայն հաջողությունը, անգամ ուխտի բարգավաճումը (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 28) բավարար չէ: Մենք Աստծո՛ կարիքն ունենք: Մենք կարիք ունենք զգալու Նրա ներկայությունն ու բարեհաճությունը: Մենք ստեղծվել ենք (տես՝ Ծննդ.1:26-27, 3:8) Աստծո հետ հաղորդակցվելու համար: Ոչ մի այլ բան, ոչինչ չի կարող այս կարիքը լրացնել:

30:9 Գոյություն ունեն երկու հռետորական հարցեր, որոնք համատեքստում ակնկալում են «ոչ» պատասխանը:

❖ **«հողափոշի»** Սա (BDB 779) փոխաբերական արտահայտություն է մահվան մասին (տես՝ Սաղմ. 22:15, 29, Եսայի 26:19, 29:4) կամ *Շեոլ/* գուբ: Մարդիկ ստեղծվել են կավից՝ հողից (տես՝ Ծննդ. 2:7) և հողին էլ վերադառնալու ենք մահվան ժամանակ (տես՝ Ծննդ.3:19):

❖ **«մի՞թե հողափոշին Քեզ կփառաբանի»** ՀԿ-ում մահը գիտակից, սակայն լուռ գոյություն էր (տես՝ Սաղմ.6:5, 88:11-12, Ժող.9:10, Ես.38:18-19):

❖ **«Քո հավատարմությունը»** Սա «ամեն» է (BDB 54), տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ:</u>

ՅԱՀՎԵՆ հավատարիմ է (BDB 54) և նվիրված (BDB 338) Իր ուխտին: Նա այն Մեկն է, որը չի փոխվում (տես՝ Մաղ.3:6, Սաղմ.102:27, Հակ.1:17, նաև՝ Եբր.13:8): Մեր հույսը, որպես հավատարիմ հետևորդներ, ՅԱՀՎԵԻ անփոփոխ, ողորմած բնավորության վրա է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 30:10-12
[10]Լսի՛ր, ո՛վ ՏԵՐ ու ողորմի՛ր ինձ, ՏԵ՛Ր, իմ օգնականը եղիր:
[11]Դո՛ւ իմ սուգը պարի վերածեցիր,
Քուրձս հանեցիր իմ վրայից ու ինձ խնդություն հագցրիր,
[12]Որպեսզի փառքս փառաբանություն երգի Քեզ ու *երբեք* չլռի:
Ո՛վ իմ ՏԵՐ Աստված, հավիտյան գոհություն եմ մատուցելու Քեզ:

30:10-12 Այս պարբերությունը սկսում է աղոթքի երեք խնդրանքներով (ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ):
1. լսիր – BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. ողորմիր – BDB 335, KB 334, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. իմ օգնականը եղիր (BDB 740, KB 810) – BDB 224, KB 243, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Ուշադրություն դարձրե՛ք, թե ՅԱՀՎԵԻ պատասխանը ինչ է փոխում սաղմոսերգուի մեջ՝
1. նրա սուգը պարի վերածվեց
2. հանում է իր քուրձը և խնդությունը հագնում («խնդություն» բառը բանաստեղծական կերպ է՝ հակադրված քուրձին, այսինքն՝ տոնական հանդերձներ)
3. ստիպում է նրան, որ երգի փառաբանություն և լուռ չմնա
4. ստիպում է նրան, որ հավիտյան գոհություն մատուցի

30:11 «քուրձ» Սա հագնում էին որպես սգո նշան:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԳԱԼՈՒ ԾԵՍԵՐԸ
SPECIAL TOPIC: GRIEVING RITES

Իսրայելացիները մի քանի տարբեր կերպերով էին արտահայտում իրենց վիշտը սիրելի մարդու մահվան կամ անձնական զոջման, ինչպես նաև հավաքական՝ ընդհանուր հանցանքների համար.
1. պատռում էին հանդերձները, Ծնն.37:29,34, 44:13, Դատ.11:35, 2 Թագ.1:11, 3:31, 3 Թագ.21:27, Հոբ 1:20
2. քուրձ էին հագնում, Ծնն.37:34, 2 Թագ.3:31, 3 Թագ.21:27, Երեմ.48:37
3. հանում էին կոշիկները, 2 Թագ.15:30, Ես.20:3
4. իրենց ձեռքերը դնում էին գլխին, 2 Թագ.13:19, Երեմ.2:37
5. հող էին լցնում իրենց գլխին, Հեսու 7:6, 1 Թագ.4:12, Նեեմ.9:1
6. նստում էին գետնին, Ողբ 2:10, Եզեկ.26:16 (պառկում էին գետնին, 2 Թագ.12:16), Ես.47:1
7. կուրծքն էին ծեծում, 1 Թագ.25:1, 2 Թագ.11:26, Նեեմ.2:7
8. սգում էին, 1 Թագ.25:1, 2 Թագ.11:26
9. կտրում էին իրենց մարմինը, 2 Օր.14:1, Երեմ.16:6, 48:37
10. ծոմ էին պահում, 2 Թագ.1:12, 12:16,21, 3 Թագ.21:27, 1 Մնաց.10:12, Նեեմ.1:4
11. ողբ էին երգում, 2 Թագ.1:17, 3:31, 2 Մնաց.35:25
12. ճաղատանում էին (մազերը պոկում կամ սափրում), Երեմ.48:37
13. կարճացնում էին իրենց մորուքները, Երեմ.48:37
14. ծածկում էին գլուխը կամ դեմքը, 2 Թագ.15:30, 19:4

Սրանք ներքին զգացմունքների արտաքին նշաններն էին:

30:12 «որպեսզի անձս/փառքս փառաբանություն երգի Քեզ» «Անձս» խոսքը բառացի գրված է «փառքս» (BDB 458): Միևնույն բաղաձայները նաև նշանակում են «լարդ»: UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 209) առաջարկում է, որ այն կարելի է հասկանալ որպես թե՝

1. հենց սաղմոսերգուին վերաբերող (այսինքն՝ իր ներքին էությունը՝ լարդը) տերմին (LXX, NKJV, NRSV, TEV, JPSOA):
2. ԲԱՑԱԿԱՆՉՈՒԹՅՈՒՆ, «Օ՛, փա՛ռք», նկատի ունենալով ՅԱՀՎԵԻՆ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք Աստված բժշկում է բոլոր հավատարիմ հետևորդներին:
2. Բացատրե՛ք, թե ինչո՞ւ է Սաղմ. 30:5 համարն այդքան կարևոր:
3. Սաղմոս 30:6-ը դրական, թե՞ բացասական հայտարարություն է:
4. Ի՞նչ կապ ունեն Սաղմ. 30:9 և 12-ը: